ջոցաւ մեծ դրան մօտ եղող մառանը կ'երթան, ուր մէկ քանի սանթիմի գաւաթ մը գինի, կտոր մը հաց եւ մէկ քիչ ծխախոտ ձեռք կը ձգեն։ Եթէ մին այդ արտաքոյ կարգի շնորհը չարաչար գործածէ, իսկոյն կը զրկուի այդ շնորհէն և այնուհետեւ երբէք չէ կարող մառանը մտնել, այլ կըստիպուի սովորական մատակարարութեամբ բաւականանալ։

Խոհանոցը, ուր կերակուրները կը պատրաստուին, շատ փոքր է. գտնուած կահ կարասին է չափազանց մեծ կաթսայ մը, թիթեղէ մէկ քանի դոյլեր և երկար կոթերով երկու շերեփներ։ Կերակրոց բաժանումը դիւրացնելու և ժամանակ չը կորսնցնելու համար, սեղանատան կից խոհանոցի որմէն պատուհան մը բացուած է, ուրկէ իւրաքանչիւրին բաժինը կը տրուի։ Խոհարարի պաշտօնը, եթէ ներելի է այդ բառը թիարանին մէջ ըսել, միշտ հինգշաբթայ դատապարտեալի մը յանձնուած է, որ իւր լաւ բարուց միջոցաւ կ'արժանանայ խոհանոցի թագաւորին ամենատենջալի պաշտօնին։ Իրմէն միայն կախում ունի ընկերաց թանին ջուրին առատութիւնն ու նուազութիւնը։ Իր սրբատեսութեամբը կ'որոշէ կերակուրը համեմելու պէտք եղած աղը. իւր կամքը առատօրէն կամ՝ ժլատօրէն բաժիններ կը տայ առանց պաշտօնէին հոգատարութեան։ Ինք ազատ է ըստ հարկին ուտել, միմիայն իւր սահմանափակ մատակարարութիւնը ըստ օրինի պահել պարտաւոր է։ Ասոնցմէ կարող է մարդ գիտնալ նորա վերայ ընկերաց ունեցած նախանձն ու յարուցած կռիւը։ Շատ անգամ զայն սպանանելու խորհուրդներ եւս կ'ունենան։

(Շարունակելի։)

ՆԱՄԱԿ ՅԵԴԵՍԻԱՅ

. . . Խմբագիր Տէր Սիօն Աղգօգոս Հանդիսի։

Բարեհաճեցէք երկտողիս անկիւն մը շնորհել պատուական Սիօն Հանդիսիդ մէջ յօգուտ Աղգիս։

Ձեր միջոցաւ տեղւոյս Թանգարանի կանոններն հրատարակուած տեսնելով, երախտապարտ ոգւով մեր շնորհակալութիւնը կը նուիրեմք խնդրելով նաև մեր շնորհակալիքը յայտնել այնց, որք Եդեսիոյ աղքատիկ Թանգարանը գրեանց նուէրներով կը շնորհաւորեն և կը քաջալերեն։

. . . Տէր և դու ընթեցող, գիտէք որ Եդեսացին աղքատիկ լինելովդեռ ուսման ճաշակը առած չ'է, նման այն մանկան որ ոտնգնայի համար մոր մը ձեռքին կը կարօտի։ Իսկ մեք Աղգասիրաց ոգւոյն եւ ձեռնտուութեան վստահ այսպիսի երկրի մը մէջ 'ի շինութիւն Աղգիս և ուսումնատենջ երիտասարդաց Թանգարան մը կանգնելու ձեռնարկած եմք, օգնութիւն մեզ 'ի Տեառնէ յուսալով և նպաստ յաղգասիրաց. չ'եմ և չ'են կարող Աղգասէրք արտասուքնին ծածկել, երբ պատմութեանց մէջ Եդեսիոյ Թանգարանին երբեմն անուանի և ճոխ լինելը կընթեռնուն և կը լսեն. այժմ կեղեքեալ և թափուր յամենայն փառաց և գրեանց, որոց հետքն անգամ այժմ չը գտնուիր թշնամեաց ձգած հրդեհաց և մոխրաց տակ, կը ճմլի սիրտս . . . Թողլով այժմ այս կէտերն, դնենք այս տեղ Թանգարանի նուիրատուաց անուանքն և նուէրները։

հոպ

1 Շարական Մագաղաթեայ սէրպէր Խուտանի հարսն։

digitised by A.R.A.R.@

Հայ

1 Քարոզագիրք Գրիգոր Աստուածաբանի, բայց ոչ ամբողջ, Մեղրական Պօղոս։

2 Մէկը քերականական եւ տրամաբանական ներածութիւն, միւսն ձեռագիր Մաշտոց Գասպանճեան Տ. Պետրոսի որդիք Սարգիս և Գէորգ։

1 Սաղմոս փոքր, Տամշաճոնց Գրիգոր։

8 Տպեալ օգտակար գրեանք Սարկաւագ Գէորգ Շահանեան յԵրուսաղեմէ։

5 Գրչագիր մեկնութիւն ժամագրքի և այլն Արեւեան Յակոբ։

1 Տարեկան Մանզումէի էֆքեար լրագիր, Ս. Յակոբեան Սարգիս ուսումնատենչ երիտասարդի կողմէն շնորհուած։

Կան ուրիշ գրեանք որ Թանգարանի եղբարց ստակով առնուած են, բայց խիստ քիչ. Թող յիշեն Աղդասէր ընթերցողք նախաւկայն Քրիստոսի 'ի Թագաւորս Վեհին Աբգարու արքայի քաղաքն և նորա դժբաղդութիւնն։

Թող յիշեն՝ որ Եդեսացին գիր և գրիչ կը սիրէ, գրեանք կը սիրէ, բայց ձեռքը չ'անցնիր, զի ուժ չ'ունի և դրամ քիչ. զի նոր ոտքի վրայ կը կանգնի. մեր տեսութիւնն և խօսքն ուրիշ ատենի Թողլով, ձայնս յուսով կամփոփեմ. և

Մնամ . . .

Յակոբ Արեւեան, մանկաւարժ և հիմնադիր Թանգարանի Եդեսիոյ Արեւեան դպրոցի։

77 Սեպ. 9։ յԵդեսիա։

ԱՐԵԱՆ ԱՆԶՐԵՒՆԵՐ

ԵՒ ՄԹՆՈԼՈՐՏԱԿԱՆ ՓՈՇԻՔ

Ամեն դիպուած, կամ երեւոյթ, որ տեղի կ'ունենայ, պատճառէ մը ծնունդ կ'առնու. ծառայ տերեւները կը շարժին, որովհետեւ հողմք կը շնչեն. հինաւուրց յաղթ մայրիները կը տատանին, որովհետեւ մրրիկները ուժգինս կը բաղխեն. ամպք կ'որոտան և կը փայլատակեն, որովհետեւ շփմամբ հակասեռ էլեքտրականութիւնք զիրար կը քաշեն. այսպէս ամենասովորականէն մինչեւ տարօրինակ դիպուածն իւր պատճառն ունի։ Ռամիկը սովորական երեւոյթներու մասին անտարբեր է, համարելով զայն արդիւնք մի անյեղլի նախասահմանութեան. իսկ անսովոր երեւոյթներու առջեւ կամ կ'ահաբեկի՝ նկատելով զայն իբր չարագուշակ նշան մեծ ձախորդութեան և կամ անփոյթ կը համարի իբրեւ արդասիք դիպուածոյ։

Բայց ընդհակառակն գիտունը ամեն երեւոյթ, թէ՛ սովորական և թէ՛ անսովոր, անտես չ'առներ. մարազընեին հետազօտութեամբ կը քննէ, կը մաղէ, կը լուծէ եւ վերջապէս անոր պատճառը կը գտնէ. այսու միայն չը բաւականանար, այլ օրէնքներու տակ կը սահմանափակէ, և նմանօրինակ երեւոյթները մի և նոյն օրէնքով կը պարզաբանէ։ Իսկ եթէ պատահի, որ մի երեւոյթի պատճառին չը թափանցէ, չը կասիր և չը լքանիր. այլ անյուսահատ ջանիւք կը յարատեւէ իւր աշխատութեան մէջ, մինչեւ որ ժամանակը իրեն ձեռնտու լինի նոյնը պարզելու։

Այսպէս շնորհիւ գիտութեան այսօր տարօրինակ կարծուած շատ երե-

digitised by A.R.A.R.@